Ձև N 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը՝**

Աշոտ Գիլոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**.

Սերբիա, Բելգրադ, Վոյեվոդինա, Նովի Սադ, 2024 թվականի ապրիլի 14-ից 18-ը:

4. **Հրավիրող կողմը** (առկայության դեպքում).

FAO, UNDP:

5. **Գործուղման նպատակը.**

Ծանոթանալ Սերբիայում ՏԱԽ-երի ձևավորման և կառավարման գործընթացներին:

6. **Քննարկված թեմաները.**

2005թ-ից ունեն մշակված գյուղական զարգացման քաղաքականություն, 2009թ-ին ընդունվել է առաջին օրենքը այդ քաղաքականության համար՝ IPARD ծրագրի շրջանակներում, ունեն 40 գործող տեղական ակտիվ խմբեր (ՏԱԽ), 21 նոր ձևավորող ՏԱԽ-եր: Սերբիայում ևս ծրագիրը տևել է շուրջ 3 տարի, այնուհետև ունեցել են խնդիր այդ խմբերի պահպանման համար, եղել են դեպքեր, որ ստեղծված խումբը փակվել է, որոշների պահպանման համար համայնքները և մարզպետարանները ֆինանսական միջոցներ են տրամադրել: Ներկայումս ունեն օրենքի կետեր ռազմավարություններում և մշակված կանոնակարգ նախատեսված ՏԱԽ-երի համար: ՏԱԽ-երը ձեռք են բերում

ասոցացիայի կարգավիճակ, որի համար ներկայացնում են նախնական հայտ, մշակված ռազմավարություն, որպեսզի կարողանան գրանցվել և շարունակել իրենց գործունեությունը: ՏԱԽ-երի գործունեության համար տրամադրվում է ֆինանսական միջոցներ պետական ֆոնդից (համայնքային և մարզային բյուջե), ինչպես նաև IPARD-ից (ֆինանսական աղբյուր ԵՄ թեկնածու երկրներին): Պետությունը վերահսկում է ՏԱԽ-ի գործունեությունը, կատարվում է նաև անկախ գնահատում: Մեկ ՏԱԽ-ի համար պահանջվում է 88.000 եվրո, որի 90%-ը ֆինանսավորում է IPARD-ից, 10 %-ը պետությունից: Ֆինանսական ծախսերը բաժանվում են 2 ուղղության՝ ռազմավարության ստեղծման և ծրագրերի իրականացման:

Քննարկվել է նաև Սերբիայում գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի մեխանիզմները, կատարման և ֆինանսավորման գործընթացները:

Այցելություն ենք ունեցել Վոյեվոդինայի մարզի Նովի Սադ համայնք, հանդիպել ենք համայնքի քարտուղարության կազմի հետ, ներկայացրել են համայնքային ռազմավարությունը, որը կազմված է 3 գերակա ուղղություններից՝ գյուղատնտեսություն (հողագործություն, անասնապահություն), ջրային ռեսուրսների կառավարում և անտառտնտեսության զարգացում: Գյուղատնտեսությունը կազմում է 90 %-ը տարածքի՝ ի շնորհիվ բարեբեր հողերի, ինչպես նաև հանդիսանում է տեղական էկոնոմիկայի հիմնական բաղկացուցիչ մասը: Թունաքիմիկատների և պեստիցիդների օգտագործման ցածր մակարդակ է, ֆերմերային տնտեսություններ ունեցողների համար պարտադիր պայման է մասնագիտական կրթությունը, օրգանիկ գյուղատնտեսությունն է հիմնականում, օրենքը արգելում է ԳՄՕ արտադրանքը: Կան շուրջ 79 ներդրող ընկերություններ՝ միջինում 3 մլրդ եվրո, 12,200 գործընկերներ, 128.465 ֆերմերային տնտեսություններ՝ միջինում 12,3 հա: Գրանցված տնտեսությունները 530000 են (ընտանիքի յուրաքանչյուր անդամը կարող է որպես առանձին տնտեսվարող գրանցված լինել): Ծրագրերի իրականացման համար խրախուսվում են նոր գրանցված տնտեսությունները, 18-40 տարիքային խումբը, պարտադիր է մասնագիտական կրթությունը, որի արդյունքում էլ կարող են ստանալ 90 % աջակցություն: Տեղնիկայի ձեռք բերման համար տրամադրվում է 40-60-80 %-ի չափով ֆինանսավորում: Ֆինանսական աղբյուրները՝ ազգային, մարզային, տեղական:

Մարզային բյուջեի 10 %-ը գյուղատնտեսությանն է (90 մլն եվրո), 70 %-ը ջրային ռեսուրսների կառավարմանը, մնացածը անտառտնտեսություններին:

Հանդիպել ենք Կուլա վարչական տարածքի ՏԱԽ-ի գործադիր տնօրենի հետ, որը ներկայացրեց իրենց ՏԱԽ-ի անցած ճանապարհը, իրականացված ծրագրերը, այցելեցինք կից վաճառակետը, որտեղ ներկայացված են այդ ՏԱԽ-ի ծրագրերի արդյունքները՝ արտադրանքի տեսքով (ալյուր, մակարոնեղեն, մեղր, մուրաբաներ, գինիներ, ձեռքի աշխատանքներ և այլն):

7. **Հանդիպումները.**

Գյուղատնտեսության նախարարությունում նախարարի տեղակալի և աշխատակազմի ղեկավարի, Սերբիայում իրկանացված LEADER ծրագրի աշխատանքային խմբի անդամների և համալսարանական ներկայացուցիչ, Վոյեվոդինայի մարզի Նովի Սադ համայնքի քարտուղարության կազմ, Կուլա վարչական տարածքի ՏԱԽ-ի գործադիր տնօրեն: Բովանդակալից մասնակցություն եմ ունեցել քննարկվող բոլոր թեմաններում:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Չկան

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Այցի ընթացքում LEADER ծրագրի վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները և փորձառությունները կիրառել ՀՀ համայնքներում:

10. Գործուղվող՝ Ա. Գիլոյան

22.04.2024թ.